ՀԱՐՑԸ ՄՆՈՒՄ Է ԲԱՑ

Այսպիսով, մեկ անգամ ևս հետաձգվեց Ազգությունների խորհրդի՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հանձնաժողովի ինֆորմացիայի ունկնդրումը: Ինչպես հայտնի է, սկզբնապես այն պետք է տեղի ունենար հոկտեմբերի վերջերին-նոյեմբերի սկզբներին, այնուհետև Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի աշխատակարգով նախատեսված էր նոյեմբերի 13-ը, հետո՝ 14-ը: Եվ ահա հիմա դարձյալ հետաձգվում է:

Նոյեմբերի 13-ին, տոնական արձակուրդից հետո, Գերագույն խորհրդի դեպուտատները վերստին ձեռնամուխ եղան աշխատանքին: Եվ, բնականաբար, օրակարգում չտեսնելով երկու շաբաթ առաջ հայտարարված ԼՂԻՄ-ի հարցը, դեպուտատները հարց տվեցին. նստաշրջանի մասնակիցներին կծանոթացնե՞ն արդյոք ԼՂԻՄ-ի հանձնաժողովի եզրակացությանը, և երբ դա տեղի կունենա:

Դեպուտատներին հավատիացրին, որ ունկնդրումները տեղի կունենան ներկա նստաշրջանում:

Նույն օրվա երեկոյան նիստում, երբ քննարկվում էր ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների երկրորդ համագումարի օրակարգը, նախագահող Մ. Ս. Գորբաչովը հայտարարեց, որ առաջարկությունում է ստացվել այնտեղ քննարկելու նաև Լեռնային Ղարաբաղի հարցը:

Այդ հարցադրմանը անմիջապես արձագանքեց Ադրբեջանական ԽՍՀ-ի պատգամավորությունը: Նրա դիտողությունները հանգում էին այն բանին, որ ռեգիոնում արդեն խաղաղություն և անդորր է ապահովվել և կարիք չկա ԼՂԻՄ-ի հարցը դնել ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում և առհասարակ այն քննարկել նստաշրջանում:

Ելույթ ունենալով, ԼՂԻՄ-ից ժողովրդական դեպուտատ Զ. Բալայանը ասաց, որ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջիկա համագումարի օրակարգում ԼՂԻՄ-ի հարցի ներառումը արդարացված է ռեգիոնում իրադարձությունների ամբողջ ընթացքով: ԼՂԻՄ-ի պրոբլեմը համագումարի առանձնաշնորհն է և պահանջում է արմատական մոտեցում: Ռեգիոնի ինչ խաղաղության ու անդորրի մասին կարող է խոսք լինել, նշեց նա, եթե այսօր ոչ թշնամանքային եղանակի պատճառով չկարողացան թռչել երկու ժողովրդական դեպուտատներ, որոնք զրկված էին ուրիշ ճանապարհով ԼՂԻՄ-ից մեկնելու հնարավորությունից, քանի որ Ադրբեջանի կողմից մարզի շրջափակումը շարունակվում է, իսկ ճանապարհներով երթևեկելը վտանգավոր է կյանքի համար:

«Ինչու՞ մեր ընդդիմախոսները այդքան համառորեն հանդես են գալիս այն բանի դեմ, որ Լեռնային Ղարաբաղի հարցը դառնա Գերագույն խորհրդի դեպուտատների քննարկման առարկա»,— հարցրեց Սերգեյ Համբարձումյանը: Նրա հարցը հնչեց միանգամայն իրավացիորեն: Գերագույն խորհրդի դեպուտատները պետք է իրենց համար պարզեն, թե ում է ձեռնտու քողարկել այն պրոբլեմը, որը լարված վիճակում է պահում մի ամբողջ ռեգիոն, ով է մտահոգված ամբողջ երկրին հասցեագրված հրապարակային այն խոսակցությամբ հնարավորությունից, թե ինչ է տեղի ունեցել և տեղի ունենում Ադրբեջանի հայ բնակչության հետ և որև է Լեռնային Ղարաբաղի իրական վիճակը:

Ժողովրդական դեպուտատների, ինչպես նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում հավատարմագրված լրագրողների որոշ մասի մեջ այն կարծիքը կա, թե ԼՂԻՄ-ի հանձնաժողովի զեկուցագրի քննարկման ներկա հետաձգումը պայմանավորված է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Տարազևիչի վերջերս ԼՂԻՄ կատարած ուղևորությամբ, որը զեկուցագիրը հարստացրել է ռեգիոնի իրադրությանն առընչվող նոր տվյալներով, և որ հիմա ժամանակ է հարկավոր տպավորությունները համակարգելու, նախկինում արված հետևություններն ու եզրակացությունները ճշգրտելու համար:

— Այնուամենայնիվ, ե՞րբ տեղի կունենա ԼՂԻՄ-ի հարցի քննարկումը և ի՞նչ մակարդակով,— հարցրինք մենք Գ. Ս. Տարազևիչին:

— Ես կարծում եմ, որ այս նստաշրջանում, բառացիորեն մոտ օրերս ԼՂԻՄ-ի հարցը կլսվի:

— Դա կլինի ԼՂԻՄ-ի վերաբերյալ հանձնաժողովի ինֆորմացիա՞, թե՞ հարցի լայն քննարկում:

— Կարծում եմ, կլինի քննարկում: Հիմա, ԼՂԻՄ կատարած իմ ուղևորությունից հետո մեր պատկերացումները զգալիորեն ընդլայնվել են: Հանձնաժողովը ունի հստակ դիրքորոշում: Սակայն հիմա դրա մասին խոսելու համար վաղ է:

— Ինչպիսի՞ն են ձեր անձնական տպավորությունները Ղարաբաղ կատարած ուղևորությունից:

— Դեռևս:

— Ներեցեք մեզ, բայց մենք լսել ենք, որ այնտեղ հարկ է եղել շրջապատել պահակախմբի ուղեկցությամբ: Դա ճի՞շտ է:

— Դե, ինչպե՞ս ասեմ: Ոչ միշտ: Բայց հեռու տեղ գնալիս մեզ ուղեկցում էր պետավտոտեսչությունը: Օրինակ, երբ մենք գիշերով Ստեփանակերտից գնում էինք Երեվան, եղանակը թռիչքային չէր և հարկ եղավ ավտոմոբիլով Երևան հասնել Ղազախ-Իջևան երթուղով, և ճանապարհին մենք տեսնում էինք զորքեր, տեխնիկա:

— Երևի այնքան էլ հարմար չէ նման ուղեկցությամբ շրջագայելը: Եթե ձեզ համար՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի նախագահի համար այդքան դժվար է եղել, ապա ներեցեք, ինչպիսի՞ն է դարաբաղցիների վիճակը:

— Ընդհանրապես մեզ չէին ուղեկցում, բայց, այնուամենայնիվ, անհնար էր բնակավայրերում տեսնել զորքեր ու տեխնիկա, ներքին գործերի մինիստրության ստորաբաժանումներ: Դա ինչ որ արտասովոր բան է մեր օրերում:

— Դուք գտնում ե՞ք արդյոք, թե ԼՂԻՄ-ի և Ադրբեջանի պատգամավորությունների երկխոսությունը կարող է հանգեցնել իրադրության կայունացմանը:

— Համենայնդեպս, հարկավոր է ամեն ինչ անել, որպեսզի երկխոսությունը խորանա, որոնվեն կոնֆլիկտի լուծման ուղիներ: Պատկերացրեք, ժողովուրդներն ու հարևանները, որոնք դարեր պետք է կողք-կողքի ապրեն, չեն կարողանում շփվել: Այսպես ապրելն անհնար է:

Ես չգիտեմ, թե այսօր որքանով կարելի է խոսել բոլոր մակարդակներում երկխոսության արդյունավետության մասին, բայց ինձ թվում է, որ հարկավոր է սկսել քաղաքական լուրջ երկխոսություն: Եվ այն պետք է կառուցվի փոխըմբռնման, միմյանց հանդեպ վստահության վրա:

— Օրերս կայացած երկխոսությունների ժամանակ դուք զգացե՞լ եք արդյոք, թե երկու կողմերը հարցն արագորեն լուծելու ցանկություն ունեն:

— Ես չէի ասի, թե սկզբում նման ցանկություն ունեին երկու կողմերը, բայց բարի կամքը առկա էր: Ինձ թվում է, որ բոլոր մասնակիցները չէ, որ միտուեսակ էին ըմբռնում այդ հանդիպումների նշանակությունը: Կրկնում եմ, բարի կամքն առկա էր, և մենք հուսով ենք, որ այդ հանդիպումները անպայման օգտակար կլինեն:

— Սրանից առաջ դուք ասել եք, որ եղել եք ԼՂԻՄ-ում, որտեղ դարաբաղցիներին ծանոթացրել եք հանձնաժողովի կարծիքին, որը առանձնակի խանդավառություն չի առաջացրել մարզի բնակչության շրջանում:

— Ես չեմ կարծում, թե այսօր որևէ մեկը կկարողանա առաջարկել մի ծրագիր, որը ցնծությամբ ընդունեին երկու կողմերն էլ: Բայց այդպիսի ծրագիր հարկավոր է ստեղծել: Հենց դա եմ ես համարում ԼՂԻՄ-ի և Ադրբեջանի դեպուտատների երկխոսության դերը:

— Ինձ թվում է, որ մեզանում ազգային պրոբլեմներն այնքան են հասունացել, որ դրանց լուծման ամեն մի ձգձգում կործանարար է,— ասաց Լենինգրադի պետական համալսարանի ամբիոնի վարիչ Ա. Ա. Սոբչակը:— Ես կողմնակից եմ այն բանին, որ արդեն դեկտեմբերյան համագումարում սկզբունքորեն լուծվի միութենական նոր պայմանագրի կնքման հարցը, այնինքն՝ սկսի իրագործվել կոմունիստական կուսակցության ազգային պլատֆորմը, որն ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմի վերջին պլենումում: Ես գտնում եմ, որ այդ հարցի ձգձգումն էլ է նպաստում նրան, որ ազգամիջյան պրոբլեմները ոչ թե լուծվում, այլ ավելի ձիգ հանգույցի են վերածվում: Ռեգիոնում գոյացած թարախապալարը լարվածության մեջ է պահում ոչ միայն երկու ժողովուրդներին՝ հայ և ադրբեջանական, այլև ամբողջ երկիրը, նրա ղեկավարությանը:

Ցավոք, այնպիսի բարդ ու պայթունակ իրավիճակում, որպիսին առաջացել է Ադրբկովկասում, ոչ ժողովրդական դեպուտատների համագումարը, ոչ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, ինչպես հարկն է չեն քննարկել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը: Ամեն անգամ եղել է հարցի առաջադրում, ինչ-որ փաստերի մատնանշում, բայց մյուս կողմը տեղնուտեղը հակադրել է դրանց: Այս ամենը նյարդայնություն է առաջացրել դեպուտատների մեջ, և հարցը հանվել է:

Նման վարքագիծը այն մտքին է հանգեցնում, որ մեզք գործ ունենք հարցի ձգձգման որոշակի տակտիկայի հետ:

— Եթե պրոբլեմներ են ծագում, ապա դրանք անհրաժեշտ է անմիջապես լուծել, որպեսզի ժամանակն ու հետագա իրադարձությունները չբարդացնեն դրանք,— ասում է ԽՍՀՄ դիզայներների միության վարչության քարտուղար Ի. Ա. Անդրեևան:— Ցավոք, ղարաբաղյան հիվանդությունը այնքան է սրվել կենտրոնի անվճռականության հետևանքով, որ այսօր ավելի արմատական լուծում է պահանջվում: Խոստովանեմ, որ ինձ համար անհասկանալի է, թե ինչու է այդ պրոբլեմի սրությունն անտեսվում: Չէ՞ որ դրանից տուժում են երկու կողմերն էլ, որոնք հայտնվել են այնքան վտանգավոր հակամարտության մեջ:

— Օրեցօր ես ավելի ու ավելի եմ հասկանում, որ ինչ-որ մեկին ձեռնտու է ռեգիոնում առաջացած լարվածությունը,— ասում է Ուկրաինայից ընտրված ժողովրդական դեպուտատ, գնդապետ Վ. Ա. Մարտիրոսյանը,— ձեռնտու է այդքան շինված, պայթունակ պրոբլեմի լուծման ձգձգումը: Համենայնդեպս, այստեղ՝ նստաշրջանում, ես զգում եմ, որ դեպուտատները հոգնել են լսել դարաբաղյան հարցի, այնտեղ տեղի ունեցող կոնֆլիկտների մասին: Դրա պատճառը մասամբ նաև այն է, որ շատ աղքատիկ է ինֆորմացիան ռեգիոնում տիրող իրադրության մասին, իսկ հաճախ էլ այն մեղանչում է միտումնավորությամբ ու անօբյեկտիվությամբ:

Վստահ եմ, որ եթե գերիշխի Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև ծագած կոնֆլիկտային իրավիճակը անգամ ներկայումս գործող ԽՍՀՄ սահմանադրության շրջանակներում կարգավորելու բոլորի ցանկությունն ու ձգտումը, ապա երկու ժողովուրդների միջև լարվածությունը կվերանա: Իսկ այսօր, դժբախտաբար, հարցը դեռևս բաց է...

Լ. ԱԶԱՐՈՅԱՆ
Զ. ԲԱԼԱԳՅՈԶՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթակիցներ)